

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

06 փետրվարի 2017թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

1. 2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի ամփոփում:
/ զեկ. Մ. Ա. Զաքարյան /
2. Դեռագոտությունների ծավալի աճի, դասախոսական կազմի - ուսանողների ներգրավվածության ընդլայնում:
/ զեկ. Մ. Ա. Զաքարյան /
3. 2016-17թթ. ուս. տարվա II կիսամյակի դասացուցակների հաստատում:
/ զեկ. Մ. Ա. Զաքարյան /
4. II կիսամյակի դասապրոցեսի նախապատրաստական աշխատանքներ:
/ զեկ. Մ. Ա. Զաքարյան /

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

1. Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ամփոփեց 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները, նշելով, որ բոլոր քննությունները անց են կացվել ըստ նախապես կազմված գրաֆիկի: Միայ գերազանց գնահատական ըստ ֆակուլտետում գործող երկու մասնագիտությունների գծով ստացել են 3 ուսանող: Առաջադիմությունը կազմել է 96.94 տոկոս:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Վ. Գուլակյանը, Ա. Վ. Ցուցուլյանը: Նրանք նշեցին, որ քննություններն անցել են ըստ նախօրոք կազմված գրաֆիկի:

ՈՐՈՇԵՑԻՆ- Գնահատել բավարար առաջին քննաշրջանի ժամանակ կատարված աշխատանքները:

2. Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ֆակուլտետում իրականացվող հետազոտությունների մասին, ընդգծելով, որ անհրաժեշտ է ակտիվացնել այդ աշխատանքները, ընդլայնելով ուսանողների ներգրավվածությունը: Նա հանձնարարեց մինչև ուսումնական տարվա ավարտը այդ ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացնել ֆակուլտետի խորհրդի նիստի քննարկմանը: Նա անդրադարձավ „Աշխարհագրություն,, մասնագիտության I կուրսին, քանի որ նոր մասնագիտություն է, անհրաժեշտ է այդ ուսանողներին ևս ընդգրկել զեկույց- ընթերցումներում, որը հետագայում խթան կհանդիսանա նշված մասնագիտության կայացման գործում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Վ. Ցուցուլյանը, Բ.Վ. Օթարյանը, Կ.Հ. Հովսեփյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Իրականացնել մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները ուսումնական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար:

3. Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2016-2017 ուստարվա II կիսամյակի դասացուցակները ըստ մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով, ըստ ամբիոնային ուսումնական ծանրաբեռնվածության պլանների: Դասախոսների պահանջարկ չկա, ըստ դասաժամերի բաշխվել են բոլոր առարկաները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- „Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության“ ամբիոնի վարիչ Ա.Վ. Ցուցուլյանը: Նա նշեց, որ դասացուցակը կազմվել է ուսումնական պլանին համապատասխան: Համակարծիք լինելով

ներկայացված դասացուցակին նա առաջարկեց հաստատել 2016 -2017 ուստարվա II կիսամյակի դասացուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2016 -2017 ուստարվա II կիսամյակի դասացուցակը:

4. Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Քննարկվեց դասապրոցեսի նախապատրաստական աշխատանքները: Գիտխորհրդի նախագահ նշեց, որ դասապրոցեսի անհաժեշտ նախապայմաններից մեկը բոլոր առարկաներից դասընթացների փաթեթների առկայությունն է: Նա նշեց, որ բոլոր առարկաների դասավանդումը անհրաժեշտ է իրականացնել համաձայն դասընթացների փաթեթներում նշված ժամանակացույցի: Նա հանձնարարեց կրթական ծրագրերի պատասխանատուներին ստուգել բոլոր պորտֆոլիոների առկայությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ.Վ. Գուլակյանը, Ա.Վ. Յուցուլյանը, նշելով պորտֆոլիոների առկայության անհրաժեշտությունն ու դրանցում նշված դրույթների կատարման անհրաժեշտությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Մինչև սույն թվականի փետրվարի 20-ը ավարտել դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) հետ կապված բոլոր աշխատանքները:

**ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**